

---

## ԿԱՊԻՏԱԼԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՈՒԹԻՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆԵՍԱԿԱՆ ճԳՆԱԺԱՄԸ

### ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վերջին տասնամյակների համաշխարհային զարգացումները առաջ բերեցին կարևոր մի շարք հիմնախնդիրներ՝ ներառյալ տնտեսական և աշխարհագրական աճող թևեռացումը, զարգացած և զարգացող երկրների միջև անհավասարության խորացումը, տարածաշրջանային նոր զարգացումներ։ Այդ ամենի հիմնական պատճառներից են կապիտալի միջազգային հոսքերը։ Գլոբալացումը և ազատականացումը հանգեցրին կապիտալի ավելի մեծ շարժումակության, սակայն ոչ բոլոր տարածաշրջանները, երկրները և առանձին ընկերությունները հավասարապես օգտվեցին կապիտալի հոսքերից։ Օգուտների հետ մեկտեղ՝ կապիտալի հոսքերը ունակ են առաջացնելու նաև մի շարք հիմնախնդիրներ<sup>1</sup>։

Կապիտալի միջազգային հոսքերը միջազգային առևտրի ֆինանսական կողմն են<sup>2</sup>։ Դրանք առաջանում են ֆինանսական ակտիվների սեփականությունը մի երկրից մյուսին փոխանցելու հետևանքով<sup>3</sup>։ Կապիտալի հոսքերը շարժվում են ապրանքների և ծառայությունների առևտրային պարտավորությունների հակառակ ուղղությամբ՝ ավելացնելով դրանք։ Վճարային հաշվեկշռի տերմինաբանությամբ կարելի է ասել, որ կապիտալի և ֆինանսական հաշիվը ընթացիկ հաշվի հայելային արտացոլանքն է<sup>4</sup>։ Կապիտալի հաշիվը ներառում է չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների գծով գործարքները և կապիտալ տրանսֆերտները, իսկ ֆինանսական հաշիվը՝ արտաքին ֆինանսական ակտիվներին և պարտավորություններին վերաբերող գործարքները<sup>5</sup>։ Կապիտալի և ֆինանսական հաշվում ֆինանսական հաշվի տեսակարար կշիռը, որպես կանոն, 90%-ից ավելի է, իսկ կապիտալի հաշվինը՝ 10%-ից պակաս<sup>6</sup>։

Կենտրոնական և Արևելյան Եվրոպան (ԿԱԵ)<sup>7</sup> աշխարհի այն տարածաշրջաններից են, որոնց համար կապիտալի հոսքերը հսկայական դեր են խաղացել։ Այդ երկրները նախկին սոցիալիստական ճամբարի, իսկ այժմ Եվրոպական միության (ԵՄ) անդամ երկրներն են, որոնք պլանային տնտեսությունից հաջողությամբ անցում են կատարել դեպի շուկայական

<sup>1</sup> Տե՛ս Barbara Stallings. The Globalization of Capital Flows: Who Benefits? The Annals of the American Academy of Political and Social Science, Vol. 610, No. 1, 2007, էջ 202։

<sup>2</sup> Տե՛ս Mack Ott. International Capital Flows. The Concise Encyclopedia of Economics, Library of Economics and Liberty, <http://www.econlib.org/library/Enc/InternationalCapitalFlows.html>

<sup>3</sup> Տե՛ս IIF Capital Flows User Guide, Institute of International Finance, 2013, էջ 1։

<sup>4</sup> Տե՛ս Mack Ott, նշվ. աշխ.։

<sup>5</sup> Տե՛ս Balance of payments textbook. - Washington, DC, USA: International Monetary Fund, 1996, էջ 26-27։

<sup>6</sup> Տե՛ս Mack Ott, նշվ. աշխ.։


<sup>7</sup> ԿԱԵ երկրների խմբում ընդգրկված են 2004 թ. ԵՄ մուտք գործած ուժ երկրները՝ Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Չունգարիան, Լեհաստանը, Զեխիան, Սլովակիան ու Սլովենիան և 2007 թ. անդամագրված Ռումինիան ու Բուլղարիան։

տնտեսական հարաբերությունները: Ըստ Համաշխարհային բանկի (ՀԲ)՝ այս երկրներում անցումային գործընթացը ավարտված է<sup>8</sup>:

Անցումային սկզբնական ժամանակահատվածում ԿԱԵ բոլոր երկրներին հատուկ էր փակ կապիտալի և ֆինանսական հաշվը: Վերջինիս ազատականացումը առաջին սերնդի բարեփոխումների կարևոր բաղկացուցիչ տարրն էր: ԿԱԵ երկրներում կապիտալի և ֆինանսական հաշվի ազատականացման ընթացքին բնորոշ են երեք ընդհանուր գծեր՝ ա) օտարերկրյա ուղղակի ներդրումները ազատականացվեցին մինչև պորտֆելային ներդրումների ազատականացումը, բ) կապիտալի ներհոսքը ազատականացվեց նախքան կապիտալի արտահոսքի ազատականացումը և գ) կապիտալի երկարաժամկետ հոսքերը ազատականացվեցին կարճաժամկետ հոսքերից առաջ<sup>9</sup>:

Երկրի կապիտալի և ֆինանսական հաշվի բաց լինելու աստիճանը բնութագրող ցուցանիշներից է Չին-Իտոյի ինդեքսը<sup>10</sup> (Chinn-Ito Index), որի համաձայն՝ 2011 թ. դրությամբ ԿԱԵ երկրների մեջ մասը (Բուլղարիա, Չեխիա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Ռումինիա) բնութագրվում էր առավելագույնս բաց կապիտալի և ֆինանսական հաշվով, երեք (Լիտվա, Սլովակիա, Սլովենիա՝ միջին, իսկ մեկը (Լեհաստան)` ցածր ազատականացված կապիտալի և ֆինանսական հաշվով (տես գրաֆիկ 1ա): Բացի դրանցից՝ ԿԱԵ երկրները բնութագրվում են նաև արտաքին առևտորի բաց լինելու բարձր աստիճանով (trade openness), որն արտացոլող հիմնական ցուցանիշներից մեկը ներմուծման և արտահանման տեսակարար կշիռն է ՀՆԱ-ում: 2012 թ. դրությամբ այս ցուցանիշով ԿԱԵ երկրները 1.7 անգամ գերազանցում էին ԵՄ-15-ի մակարդակը և միայն Ռումինիան ու Լեհաստանն էին, որ գտնվում էին ԵՄ-15-ի հետ համարժեք մակարդակում (տես գրաֆիկ 1բ):

**Գրաֆիկ 1**  
ա) Չին-Իտոյի ինդեքսը 2011 թ., բ) ներմուծման և արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%) 2012 թ.<sup>11</sup>



<sup>8</sup>Տես «Unleashing Prosperity: Productivity Growth in Eastern Europe and the Former Soviet Union», World Bank, 2008, էջ 42:


<sup>9</sup>Տես J. Hagen, I. Siedschlag, Managing Capital Flows: Experiences from Central and Eastern Europe, Asian Development Bank Institute, Discussion paper No. 103, 2008, էջ 6:

<sup>10</sup>Տես The Chinn-Ito Index data, Authors' calculations, 24.04.2013, <http://web.pdx.edu/~ito>:

<sup>11</sup>Աղբյուր՝ ա)-ն կառուցվել է ըստ Չինի և Խոսյի հաշվարկած ինդեքսի տվյալների՝ [http://web.pdx.edu/~ito/kaopen\\_2011.xls](http://web.pdx.edu/~ito/kaopen_2011.xls), բ)-ն՝ Եվրոպական հանձնաժողովի AMECO տվյալների բազայի՝ [http://ec.europa.eu/economy\\_finance/db\\_indicators/ameco](http://ec.europa.eu/economy_finance/db_indicators/ameco):


ԵՄ մուտք գործելուց հետո ԿԱԵ երկրները ապահովեցին տնտեսական աճի բարձր տեմպեր, որոնք մոտ երկու անգամ գերազանցում էին ԵՄ տնտեսական աճի տեմպերը (տես գրաֆիկ 2):

**Գրաֆիկ 2**  
**ԿԱԵ երկրների և ԵՄ տնտեսական աճի տեմպերը 2000-2012 թթ.<sup>12</sup>**



Կապիտալի և ֆինանսական հաշվի ազատականացումը, իրականացված բարեփոխումները, ԵՄ անդամակցումը և Արևմտյան Եվրոպայում առկա ցածր տոկոսադրույթները նպաստեցին, որ մինչճգնաժամային ժամանակահատվածում ԿԱԵ երկրները ստանան կապիտալի հսկայական հոսքեր: Նախքան ճգնաժամը բոլոր զարգացող երկրների (ԶԵ) շարքում ԿԱԵ երկրները ընդունել էին կապիտալի ամենամեծ հոսքերը, ինչը ներկայացված է գրաֆիկ 3-ում:

**Գրաֆիկ 3**  
**Զուտ կապիտալի ներհոսքը զարգացող երկրներ  
(մլրդ դոլ.) 2002-2014 թթ.<sup>13</sup>**




<sup>12</sup> Աղբյուր՝ կառուցվել է ՀԲ-ի տվյալների բազայի հիման վրա՝ <http://www.databank.worldbank.org>:

<sup>13</sup> Աղբյուր՝ IIF Capital Flows User Guide, Institute of International Finance, 2013, էջ 2:

Կապիտալի ներհոսքը մեծապես նպաստեց տնտեսական աճի վերո-  
նշյալ բարձր տեմպերի ապահովմանը, ինչն առանց արտաքին ներդրում-  
ների անհնար կլիմեր: Գրաֆիկ 4-ում ներկայացված է հիմնական կապի-  
տալի համախառն կուտակման և համախառն խնայողությունների տարբե-  
րության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (1998-2012 թթ. միջինը): Ինչպես  
երևում է նշված գրաֆիկից, 1998-2012 թթ. ընկած ժամանակահատվածում  
ներքին խնայողությունների և ներդրումների միջև առկա  
ճեղքվածքը ծածկելու համար կԱԵ բոլոր երկրները ունեցել են արտաքին  
ֆինանսավորման կարիք: Իսկ ԵՄ-15 երկրներում նկատվել է հակառակ  
գործընթացը: Այդ երկրներում նկատվում է ներքին խնայողությունների ա-  
վելցուկ, որի մի մասը կապիտալի հոսքերի տեսքով բաժին է ընկել կԱԵ  
երկրներին:

#### **Գրաֆիկ 4**

**Հիմնական կապիտալի համախառն կուտակման և համախառն խնայո-  
դությունների տարբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում  
(1998-2012 թթ. միջինը)<sup>14</sup>**




Զարգացող կԱԵ երկրները շարունակում էին մնալ կապիտալ ներ-  
դրումների համար նախընտրելի շուկա, քանի դեռ առկա էր նակրոտնտե-  
սական կայունություն: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական  
ճգնաժամը շրջադարձային դարձավ, և իրավիճակը էապես փոխվեց: ԿԱԵ  
երկրների ՀՆԱ-ի անընդհատ աճը 2009 թ. վերածվեց տնտեսական անկման:  
Տարածաշրջանի ՀՆԱ-ի աճը 2008 թ. դարձավ 4.21%, իսկ 2009 թ.՝ -3.73%:  
Սակայն ընդհանուր տնտեսական իրավիճակը ԿԱԵ երկրներում ավելի բա-  
րենպաստ էր, քան ԵՄ-ում, որտեղ տնտեսական աճը 2008 թ. և 2009 թ. կազ-  
մեց համապատասխանաբար՝ 0.33% և -4.31%:

<sup>14</sup> Աղբյուր՝ կառուցվել է ըստ Եվրոպական հանձնաժողովի AMECO տվյալների  
բազայի՝ [http://ec.europa.eu/economy\\_finance/db\\_indicators/ameco](http://ec.europa.eu/economy_finance/db_indicators/ameco):

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ԿԱԵ տարածաշրջանի կապիտալի հոսքերը մեծ հարված ստացան՝ նվազելով մինչև 2005 թ. մակարդակը: Ինչպես երևում է գրաֆիկ 5ա-ից, մինչճգնաժամային ժամանակահատվածում ԿԱԵ երկրները ընդունել են կապիտալի հսկայական հոսքեր, որոնք առավելագույնին են հասել 2008 թ.՝ 134 մլրդ. ԱՄՆ դոլ., և շեշտակի նվազել հաջորդ տարի՝ շուրջ 63%-ով: Ինչպես ցույց է տալիս կապիտալի հսկայական հոսքերի պատճությունը, դրանք մեծ մասամբ ավարտվում են անկմանք՝ հանգեցնելով հսկայական բացասական հետվաճքների: Սա արդեն չորրորդ խոշոր պարբերաշրջանն է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում<sup>15</sup>: ճգնաժամի հետևանքով անկման համանման միտում է ցուցաբերել նաև զուտ կապիտալի հոսքեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը 2009 թ.՝ նախորդ տարվա համեմատ կրճատվել է 9%-ային կետով՝ կրկին հասնելով 2005 թ. մակարդակին (տե՛ս գրաֆիկ 5բ):

#### Գրաֆիկ 5

ա) Զուտ կապիտալի հոսքերը (մլրդ դոլար) և բ) Զուտ կապիտալի հոսքեր/ՀՆԱ հարաբերակցությունը ԿԱԵ երկրներում 2005-2012 թթ.<sup>16</sup>




ԿԱԵ տարածաշրջանում կապիտալի հոսքերի տեսանկյունից առաջատարներն են համարվում Լեհաստանը, Չեխիան և Ռումինիան: 2008 թ. համեմատությամբ, 2012 թ. կապիտալի տարածաշրջանային հոսքերում միայն Լեհաստանը և Չեխիան են ավելացրել իրենց մասնաբաժննը: Մնացած երկրները զիջել են իրենց մինչճգնաժամային դիրքերը, ընդ որում՝ մի մասը՝ մի քանի անգամ: 2012 թ. տարածաշրջանային կապիտալի հոսքերի կեսից ավելին բաժին էր ընկնում Լեհաստանին, իսկ 81%-ը՝ Լեհաստանին, Ռումինիային և Չեխիային (տե՛ս գրաֆիկ 6):

<sup>15</sup>Տե՛ս Graciela L. Kaminsky, International Capital Flows, Financial Stability and Growth, DESA Working Paper No. 10, 2005:

<sup>16</sup>Այս և հաջորդ գրաֆիկները կառուցվել են ՀԲ-ի տվյալների բազայի հիմանված վրա՝ <http://www.databank.worldbank.org>:

## Գրաֆիկ 6

ԿԱԵ տարածաշրջանի գուտ կապիտալի հոսքերի կառուցվածքը ըստ  
Երկրների (2008 թ. և 2012 թ.)



ԿԱԵ Երկրների խմբում կարելի է առանձնացնել Երկու ենթախումբ՝

ա) *Լեհաստան և Չեխիա:* Լեհաստանը տարածաշրջանի միակ Երկրն է, որում ճգնաժամի հետևանքով չի արձանագրվել տնտեսական անկում (տնտեսական աճը 2009 թ.՝ 1.6%), իսկ մնացած Երկրներից ամենափոքր տնտեսական անկում արձանագրվել է Չեխիայում (-4.51%՝ 2009 թ.):

բ) *Բալթյան երկրներ,* որոնք ճգնաժամի հետևանքով տարածաշրջանում արձանագրել են տնտեսական ամենամեծ անկումը (Լատվիա՝ -17.95%, Լիտվա՝ -14.74% և Էստոնիա՝ -14.07%):

Առանձնացված Երկու ենթախմբի Երկրների կապիտալի հոսքերի վերլուծությունը բացահայտում է կարևոր օրինաչափություն. առաջին ենթախմբի Երկրները, ի տարբերություն երկրորդի, ստացել են կապիտալի մեծ հոսքեր ոչ միայն մինչգնաժամային, այլ նաև հետզգնաժամային ժամանակահատվածում: Չեխիայում կապիտալի հոսքերը, 2009 թ. սկսած, գերազանցել են նույնիսկ նախաճգնաժամային մակարդակը: Լեհաստանը, չնայած կապիտալի հոսքերի կրճատմանը, շարունակում է ընդունել հսկայական հոսքեր, որոնք ամենաբարձրն են տարածաշրջանում՝ 20.6 մլրդ դոլ.: Բալթյան երկրներում առկա է տրամադրություն հակառակ պատկերը. կապիտալի հոսքերը ճգնաժամի հետևանքով 2009-2010 թթ. ոչ միայն նվազեցին, այլև ամբողջությամբ դադարեցին՝ ընդունելով բացասական արժեք, որը պահպանվում է մինչև այժմ՝ կազմելով նախաճգնաժամային մակարդակի ընդամենը 8%-ը (տես աղյուսակ 1):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ այն Երկրները, որոնց հաջողվել է պահպանել կապիտալի հոսքերը, կրել են ամենափոքր կորուստները. իսկ այն Երկրները, որոնցում կապիտալի հոսքերը դադարել են, ունեցել են շատ մեծ անկում:

## Աղյուսակ 1


### Կապիտալի գուտ հոսքերը (մլն դոլար) 2005-2012 թթ.

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Լեհաստան	8040	12886	29801	47118	27200	34492	34167	20640
Չեխիա	2937	4894	6661	4604	7495	8664	5354	4694
Լատվիա	2288	4401	6637	5069	-2466	-996	731	446
Լիտվա	1881	3507	5746	6292	-1474	-15	558	298
Էստոնիա	1238	2771	3453	2125	-651	-450	-408	372

Բացի կապիտալի հոսքերի մեծության փոփոխությունից, փոխվել է նաև այդ հոսքերի կառուցվածքը: Կապիտալ հոսքերը բաժանվում են երեք հիմնական խմբի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), պորտֆելյային ներդրումներ (ՊՆ) և այլ ներդրումներ (ԱԱ): ԿԱԵ երկրների կապիտալի հոսքերի կառուցվածքը 2005-2012 թթ. ընկած ժամանակահատվածում ներկայացված է գրաֆիկ 7-ում, որից երևում է, որ ճգնաժամից մեծապես տուժել են ՕՈՒՆ-ները, որոնք 2009 թ. 2008 թ. համեմատությանը կրճատվել են 57.7%-ով, իսկ 2007 թ. համեմատությանը՝ 68.8%-ով: Իսկ ֆինանսական հաշվում եապես աճել է ՊՆ-ների տեսակարար կշիռը՝ կապիտալի ընդհանուր հոսքերի կառուցվածքում դաշնալով գերակայող: Ամբողջությամբ վերցրած՝ ամենամեծ հարվածը ստացել են այլ ներդրումները, մասնավորապես բանկային ֆինանսավորումը, որը մինչգնաժամային բարձր մակարդակից նվազել է մինչև բացասական մակարդակ: Ընդ որում, այլ ներդրումների արտահոսքը ԿԱԵ երկրներից տարեցտարի աճում է (տես գրաֆիկ 7):


### Գրաֆիկ 7

#### ԿԱԵ երկրների ֆինանսական հաշվի կառուցվածքը 2005-2012 թթ.



Ինչպես հայտնի է, ՊՆ-ները, ի տարբերություն ՕՈՒՆ-ների, առավել ռիսկային են, քանի որ ավելի կարճաժամկետ բնույթ ունեն և պարունակում են հանկարծակի ընդհատման ռիսկ, որը նույնիսկ կարող է դառնալ ճգնաժամի առաջացման պատճառ: Ասվածի վառ օրինակ է Սլովենիան, որը ճգնաժամից հետո երկար ժամանակ ընդունում էր հսկայական ՊՆ-ներ, որոնք, սակայն, հանկարծակի ընդհատվեցին 2012 թ., որի հետևանքով տարածաշրջանում Սլովենիան ունեցավ տնտեսական ամենամեծ անկումը (տես՝ գրաֆիկ 8ա): Պետք է նկատել նաև, որ ԿԱԵ տարածաշրջանում կապիտալի ամենամեծ շուկա ունեցող Լեհաստանը 2008 թ. սկսած ընդունում է հսկայական ՊՆ-ներ, որը ռիսկային է ոչ միայն իր, այլև ողջ տարածաշրջանի համար (տես՝ գրաֆիկ 8բ):

**Գրաֆիկ 8**  
**Սլովենիայի և Լեհաստանի ֆինանսական հաշվի կառուցվածքը**  
**(մլրդ դոլար) 2005-2012 թթ.**



Կարևոր է պարզել նաև, թե կապիտալը տնտեսության առավելապես որ հատվածներ է հոսում, քանի որ դրանով է որոշվում կապիտալի հոսքերի ազդեցությունը ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա: Հետազոտությունները<sup>17</sup> ցույց են տալիս, որ անկախ ԿԱԵ երկրներում վարվող հարկաբյուջետային կամ արտարժութային քաղաքականությունից, կապիտալի հոսքերը դեպի անշարժ գույքի սեկտոր ավելի մեծ ազդեցություն են ունենում ՀՆԱ-ի տատանումների վրա, քան դեպի տնտեսության այլ սեկտորներ կատարվող հոսքերը: Ուստի, քանի որ զարգացող շուկաներին կարող են մոտենալ կապիտալի ներհոսքի նոր ալիքներ, այստեղից հետևում է, որ պետական

<sup>17</sup> Տես՝ Pritha Mitra. Capital Flows to EU New Member States: Does Sector Destination Matter? IMF Working Paper, 2011:

քաղաքականություն իրականացնող մարմինները պետք է նպաստեն, որ կապիտալի ներհոսքը ուղղվի տնտեսության այն սեկտորներ, որոնք նվազագույնի են հասցնում ՀՆԱ-ի տատանումները:

**Եզրակացություն:** Մինչև և հետճգնաժամային ժամանակահատվածներում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կապիտալի հոսքերի վերլուծության շնորհիվ բացահայտվել են հետևյալ միտումները՝

- ԿԱՅԵ երկրների մեծ մասն ունի կապիտալի և ֆինանսական անբողջությամբ ազատականացված հաշիվներ,
- մինչճգնաժամային ժամանակահատվածում տեղի է ունեցել կապիտալի հսկայական ներհոսք դեպի ԿԱՅԵ տարածաշրջան, ինչը դարձել է այդ երկրներում բարձր տնտեսական աճ ապահովող կարևոր գործոն,
- համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ԿԱՅԵ երկրների կապիտալի հոսքերը մեծ հարված ստացան և մինչև օրս դեռ չեն վերականգնվել,
- ԿԱՅԵ տարածաշրջանում կապիտալի հոսքերի կենտրոնացվածության մակարդակը բավական բարձր է և ավելի է աճել ճգնաժամի հետևանքով: Մեկ երկրի բաժին է ընկնում տարածաշրջանային համախառն հոսքերի 55%-ը, իսկ երեք երկրների՝ 81%-ը, մինչդեռ ուրիշ երկրներ ունեն բացասական ցուցանիշ,
- ճգնաժամի ազդեցությամբ էապես փոխվել է ԿԱՅԵ երկրների կապիտալի հոսքերի կառուցվածքը՝ դառնալով առավել ռիսկային,
- այն երկրները, որոնց հաջողվել է պահպանել կապիտալի հոսքերը, կրել են նվազագույն կորուստներ, իսկ այն երկրները, որոնցում կապիտալի հոսքերը դադարել են, ունեցել են առավելագույն անկումը:

**Բանալի բառեր – կապիտալի հոսքեր, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, ճգնաժամ, օտարերկոյա ուղղակի ներդրումներ, պորտֆելային ներդրումներ**

**ЖИРАЙР МХИТАРЯН – Тенденции капитальных потоков в странах Центральной и Восточной Европы и финансово-экономический кризис.** – В статье выявлены межстрановые различия в Центральной и Восточной Европе (ЦВЕ) до и после кризиса. Большинство стран ЦВЕ имеют полностью либерализованные капитальные и финансовые счета. В докризисный период здесь отмечались огромные капитальные потоки, которые во многом обеспечили высокие темпы экономического роста. Однако в результате глобального кризиса эти потоки резко сократились, их концентрация возросла, структура же стала более рискованной. Страны, которым удалось сохранить капитальные потоки, понесли наименьшие потери, а в странах, где капитальные потоки замерли, отмечены наибольшие убытки.

**Ключевые слова:** капитальные потоки, Центральная и Восточная Европа, кризис, прямые иностранные инвестиции, портфельные инвестиции

**ZHIRAYR MKHITARYAN – *The Trends of Capital Flows in the Countries of Central and Eastern Europe and Financial and Economic Crisis.*** – In the article the trends of capital flows in Central and Eastern Europe (CEE) countries are analyzed and their interstate differences in pre- and post crisis periods are revealed. The majority of CEE countries have fully liberalized capital and financial accounts. In pre-crisis period CEE countries received huge capital inflows, which determined high economic growth rates in these countries. However, the Global crisis affected the capital flows very negatively. As a result, they sharply declined, their concentration increased, and their structure became riskier. Those countries, which were able to save capital flows, experienced the lowest losses and in those countries, where capital flows stopped, experienced the highest fall.

**Key words** – *capital flows, Central and Eastern Europe, crisis, foreign direct investments, portfolio investments*